ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տեսաձայնային սարքերի ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-SU-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.06.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները

«*ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-SU-18/2*» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Տիգման Գրուպ» ՍՊԸ** (ք. Երևան, Մոլդովական 20/40)
2. **«ՓԻ-ՍԻ-էլեկտրոնիկս» ՍՊԸ** (ք. Երևան, Անդրանիկի 30/5)
3. **Զավեն Եղիազարյան Սերյոժիայի ԱՁ** (ք. Երևան,Կոմիտասի պ., 59/7 բն. 12)
4. **ԱՁ ՑՈԼԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ** (ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 31Ա շ., բն. 6)

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
				«Տիգման Գրուպ» ՍՊԸ	«ՓԻ-ՍԻ-էլեկտրոնիկս» ՍՊԸ	Զավեն Եղիազարյան Սերյոժիայի ԱՁ*	ԱՁ ՑՈԼԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ*
1	Տեսաձայնային սարքեր	1	1800000	1497500	1500000	1698000	1784000

***Հանդիսանում է ԱԱՀ չվճարող:**

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Տիգման Գրուպ» ՍՊԸ**-ին:
2. Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՓԻ-ՍԻ-էլեկտրոնիկս» ՍՊԸ**-ին:

3.Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան